ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 սեպտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

129
(2609)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՄ 90

2020 թվականի իր ավանդական մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը 100 փաստ ներկայացնելիս նշում էր. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումների թիվը 2017 թվականին կազմել է 10000, 2018 թվականին՝ 12400, իսկ 2019 թվականին՝ 14900: Նույն տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է շնորհվել համապատասխանաբար 8100, 9100 եւ 13000 անձի»: Նա կարեւոր փաստ էր համարում այն հանգամանքը, որ Հայաստանի քաղաքացիություն ստանալու դիմումները ավելացել են, սակայն 2019 թվականից հետո այլ պատկեր ունենք: Մասնավորապես, 2019 թվականի 13 000 դիմումի փոխարեն՝ 2020 թվականին քաղաքացիություն է ստացել 11456 մարդ, իսկ, ահա, 2021 թվականին այս թիվն ավելի է իջել եւ ստացվել է 8521 դիմում, որից հաստատվել է 7379-ը: Ստացվում է՝ Փաշինյանը հերթական անգամ հայտարարություն է արել եւ փաստ ներկայացրել մի բան, որը հետո հերքվել է եւ բացասական միտում գրանցել. նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Մինչ երեկվանից հայ-ադրբեջանական սահմանին տիրող լարվածությունը շարունակվում է, հակառակորդը շարունակում է տարբեր տրամաչափի զինատեսակներով սադրանքների դիմել ու ռազմական ագրեսիա իրականացնել ՀՀ սուվերեն տարածքների նկատմամբ, հայ հասարակությանը շարունակում է կարեւորագույն մեկ հարց տանջել ու հուզել՝ ՀՀ օդն ինչո՞ւ է բաց: Նույն հարցը նաեւ 44-օրյա պատերազմի ժամանակ էինք տալիս, հարցը, սակայն, օդում կախված էր մնում, ինչպես այսօր: Անօդաչու թռչող սարքերից մեկն անգամ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Գորիսում տեղակայված ՀՕՊ համակարգին է հարվածել ու, ըստ երեւույթին, այն շարքից հանել: Հիշեցնենք, սակայն, որ դեռեւս 2016-ի դեկտեմբերի 23-ին Ռուսաստանի եւ Հայաստանի պաշտպանության նախարարները Մոսկվայում երկու երկրների միացյալ տարածաշրջանային ՀՕՊ համակարգի ստեղծման համաձայնագիր են ստորագրել, ինչը «օդը պաշտպանելու» փոխօգնություն է նշանակում: Թե ինչ փոխօգնություն է եղել այս ընթացքում մեր ռազմավարական գործընկերոջից, միայն ենթադրել կարելի է: Փաստն այն է, որ 44-օրյա պատերազմից հետո արդեն ոչ միայն Արցախի, այլ նաեւ Հայաստանի օդն է անպաշտպան: ՀՀ իշխանավորներից ու պատկան մարմիններից, իհարկե, դեռ այսօր, վաղը, մյուս օրը դարակազմիկ մտքեր կհնչեն, թե ինչ է կատարվել ու կատարվում, իրականությունը, սակայն, այն է, որ պատերազմից երկու տարի անց ադրբեջանական հրթիռներն ու ԱԹՍ-ները դեռ շարունակում են «սավառնել» Հայաստանի երկնքում:



Հայաստանում վարորդների մոտ բողոքի նոր ալիք է հասունանալու: Հայաստանի կենտրոնական բանկն առաջարկում է վերանայել «Բոնուս-Մալուս» համակարգը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հաշվի կառնվի նաեւ ապահովադիրների վարորդական պատմությունը, այսինքն՝ նրանց պատկանող ավտոմեքենաների մասնակցությամբ կատարված վարչական իրավախախտումների քանակը եւ դրանց համար վարորդներից հանված բալերի քանակը: Ի դեպ, տեղեկացնենք, որ սկսած 2023 թվականից՝ ավտոապահովագրողների բյուրոն նախատեսում է սերտ կապ ստեղծել ԱՊՊԱ ոլորտում ապահովադիրների կողմից վճարվող ապահովագրավճարների չափի եւ նրանց կողմից ճանապարհային երթեւեկության անվտանգության բնագավառում դրսեւորվող կարգապահության միջեւ: ՀՀ ոստիկանության տեղեկատվական-փնտրողական համակարգից ԱՊՊԱ-ի համակարգ կփոխանցվի վարորդների կողմից ավտոմեքենաներով կատարվող ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների կամ այդպիսի խախտումների համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի համաձայն նրանց տրվող տուգանային միավորների վերաբերյալ տեղեկությունը:

Ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ Հայաստանում ապաստան հայցող քաղաքացիների թիվն ավելացել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2022 թվականի առաջին 6 ամիսների ընթացքում արդեն Հայաստանում ապաստանի հայց են ներկայացրել 320 անձինք, որոնցից 213-ը Ուկրաինայի քաղաքացիներ են: Մեզ հայտնի դարձավ, որ գործադիրը մտադիր է ժամանակավոր կացարանով ապահովելու խնդրի լուծման նպատակով փոխհատուցում տրամադրել նրանց 6 ամիս ժամկետով: Խոսքը 60 հազար դրամի մասին է, այսինքն՝ 6 ամիսների ընթացքում նրանք պետք է սովորեն լեզու, լուծեն իրենց զբաղվածության հետ կապված հարցերը, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո կացարանի խնդիրը պետք է ինքնուրույն լուծեն: Ըստ պաշտոնական տվյալների՝ մեր հանրապետությունում ապաստան հայցող անձանց թիվը տարեկան միջինում կազմում է շուրջ 270 անձ: Նշենք, որ սիրիական ճգնաժամի հետեւանքով 2012 թվականին ՀՀ-ում ապաստան հայցող անձանց թիվը հասել է 579-ի, իսկ 2013-ին՝ 320-ի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՆՑ ՏԵՂԱՇԱՐԺԻ

«ԲԱՆԱԿՈՒՄ ՈՉԻՆՉ ՉԻ ՓՈԽՎԵԼ»

Արդեն երկրորդ օրն է, ինչ ադրբեջանական զորքը նախահարձակ է եղել ու ռազմական գործողություններ է իրականացնում հայ-ադրբեջանական սահմանի գրեթե ամբողջ երկայնքով: Հայկական կողմի զոհերի ու վիրավորների մասին անձամբ երկրի վարչապետ Նիկոլ Փաշինյանն է հայտարարել ՀՀ Ազգային ժողովի ամբիոնից: Այս պահին մոտ 5 տասնյակ զոհերի մասին է հայտնի, վիրավորների թվերի մասին տեղեկություններ չկան: Երեկ՝ սեպտեմբերի 13-ին՝ Ազգային ժողովի ֆառօրյա հերթական նիստի օրը, Փաշինյանը գլխավոր ամբիոնից խոսեց պատշոնական Քաֆվի պատկերացրած խաղաղության օրակարգի մասին. ասել, թե մեր երկրի առաջնորդը նոր բան փոխանցեց, անկեղծ չի լինի, բայց, ինչպես միշտ, հակասական հայտարարություններով հանդես եկավ: Ըստ նրա՝ 44-օրյա պատերազմից հետո Հայաստանը զենք ձեռք բերելու խնդիր ունի, ու դա ոչ թե ֆինանսների, այլ արտաքին քաղաքականության հետ է կապված: Նրա կարծիքով՝ երկրներ կան, որ պատրաստ չեն Հայաստանին զենք վաճառել: 44-օրյա աղետաբեր պատերազմից հետո թվում էր՝ ՀՀ զինված ուժերը ոչ միայն զենք ձեռք բերելու, այլեւ սահմանները կահավորելու, դիրքերում ամրաշինական աշխատանքներ անելու ու, այսպես ասած, բանակի մեջքն ուղղելու մասով զօրուգիշեր, քրտնաջան ու ինքնամոռաց աշխատանք պետք է տանեն: Այս երկու օրերի իրավիճակը սակայն ցույց է տալիս, թե իրականում ինչ աշխատանքներ են տարվել: Թեմայի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է պատշոնության նախկին փոխնախարար, ՀՀԿ-ական Արտակ Զաքարյանի հետ:

-Պարոն Զաքարյան, 44-օրյա պատերազմից հետո բանակում դրական տեղաշարժեր եղե՞լ են:

-Հայաստանում բոլոր տարիներին իրականացված սոցիարցումների տվյալներով՝ պաշտպանության նախարարությունը մշտապես ունեցել է ամենաբարձր վարկանիշը: Բայց վերջին՝ «Միջազգային հանրապետական ինստիտուտի» կողմից հրապարակված սոցիարցումների տվյալներով անգամ, որով Նիկոլ Փաշինյանն ու նրա քաղաքական իշխանությունն իրենց լավ են զգում, պաշտպանության նախարարությունը ողբերգական ցածր վարկանիշ ունի: Պաշտպանության նախարարությունը միակը չէ այդ ցուցակում. ցածր վարկանիշ ունեցող կառույցներից է նաեւ արդարադատության նախարարությունը, բայց իրենց որ մնա, ամբողջ օրն արդարադատությունից, պաշտպանվածությունից կամ բանակից կխոսեն:

-Այսինքն, պատերազմից հետո զինված ուժերում որեւէ բարեփոխում չի՞ եղել:

-Ցավոք՝ ոչ: Ոչ մի բարեփոխում, ոչ մի տեղաշարժ չի եղել: Էական նշանակության որեւէ խնդիր չի լուծվել: Միայն պոպուլիստական, հիմար հայտարարություններ են հնչել, ու բանակը պառակտող գործընթաց է մեկնարկել: Քաղաքական դավաճանության ամբողջ մեղքը զինվորականության վրա բարդելու փորձեր են եղել: Ինձ հասած տեղեկություններով՝ շարունակվում են բանակի գնումների հարցերը, ու տարբեր այլ համակարգերում ամենատարբեր պաշտոնյաներ իրենց ձեռքերը շարունակում են տաքացնել, սեփական գրպանների հարցերը լուծել՝ այդպիսով շարունակելով մսխել ռազմական կարիքները, եւ Նիկոլ Փաշինյանը հասարակությանն ինչքան էլ ասի, իբրեւ թե իր ժամանակ բանակում ամենից շատ ռազմական ծախսերն են արել, ես հստակ ապացուցված թվերով ասել եմ ու շարունակում են պնդել՝ Փաշինյանի ժամանակ ամենամեծ մսխումներն են եղել. մնացածը թոզ փչոցի է՝ ելակը, ճաշարանները մասնավորին բիզնեսին տալը, առանց հրթիռների «Սու-30»-ները, 3-րդ երկրներից դուրս գրված ու ոչ պիտանի հակաօդային Oca-AKM համակարգերը եւ այլն: Եթե մի երկրի ղեկավար մեկ տարվա ընթացքում 150 մլն դոլար է մսխում բանակի վրա ու հետո հպարտանում, թե ամենամեծ ռազմական ծախսերն իր իշխանության ժամանակ են կատարվել, ապա ես հարց եմ տալիս՝ ո՞ւր են այդ ծախսերը: 44-օրյա պատերազմի ընթացքում եղե՞լ է գոնե մեկ օր, որ այդ ծախսերն արդացված լինեն. ոչ չի եղել: 44 օր շարունակ բանակը թուրք-ադրբեջանական տանդեմին ու իսլամաջիհադիստական խմբավորումների դեմ պայքարել, կռվել, մարտնչել է նախորդ իշխանությունների ժամանակ ձեռք բերած զինատեսակներով: Էլ չասեմ, որ 4 միլիարդից ավելի արժողության զենք է գերության տրվել Ադրբեջանին, ու հենց դրանցով էր Բաքվի մոտակայքում հայկական զինատեսակների ցուցահանդես բացվել: Ալիեւն էլ զարմացել էր, թե Հայաստանին որտեղի՞ց այսքան զենք: Հիմա դուք ասում եք՝ ի՞նչ է փոխվել բանակում. ոչ մի բան էլ չի փոխվել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

«ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՄ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՊԻՏ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ

Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կոպիտ ոտնահարմամբ Հայաստանի Հանրապետության դեմ Ադրբեջանի հերթական ռազմական ագրեսիան ուղեկցվում է Հայաստանի քաղաքացիական ենթակառուցվածքների, քաղաքացիական նշանակության օբյեկտների, այդ թվում՝ ՀՀ տարբեր սահմանամերձ բնակավայրերի դպրոցների, բնակելի տների թիրախավորմամբ, որտեղ առհասարակ զսնվում են երեխաներ, կանայք, տարեցներ: Այս մասին հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պատշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Հատկապես քաղաքացիական բնակչության, քաղաքացիական նշանակության ենթակառուցվածքների եւ օբյեկտների նկատմամբ Ադրբեջանի այս սանձարձակ եւ հանցավոր վարքագիծը բացարձակ անթույլատրելի է եւ կոպտորեն ոտնահարում է միջազգային հումանիտար իրավունքի հիմնարար սկզբունքները: Ուստի մարդասիրական արժեքների ջատագով միջազգային հանրությունից պահանջում եմ հասցեական դատապարտող հայտարարություններ՝ ՀՀ սահմանամերձ բնակավայրերի քաղաքացիական բնակչության, օբյեկտների եւ ենթակառուցվածքների նկատմամբ Ադրբեջանի այս հանցագործության վերաբերյալ: Միջազգային օղակները պարտավոր են օգտագործել ողջ գործիքակազմը՝ ի պաշտպանություն ագրեսիվ հարձակման ենթարկված ՀՀ-ի խաղաղ բնակչության իրավունքների, եւ, առհասարակ, միջազգային հումանիտար իրավունքի հիմնարար սկզբունքների:

Պաշտոնական տվյալներով արդեն իսկ քաղաքացիական երեք անձ ստացել է վիրավորում՝ Ադրբեջանի կողմից հայկական դիրքերի եւ բնակավայրերի ուղղությամբ հրետակոծության հետեւանքով:

Ստորեւ ներկայացված են Ադրբեջանի կողմից ՀՀ մի շարք բնակավայրերի քաղաքացիական ենթակառուցվածքների եւ օբյեկտների նկատմամբ Ադրբեջանի իրականացրած հանցագործությունների ապացույցները»:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՕԳՆԵԼ ԵՐԿՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ երեկ Հակակոռուպցիոն դատարանում ՔՈՒ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը եւ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի պետ-վարչության պետ, գեներալ-մայոր Ավետիք Մուրադյանը դատարանի դռնփակ նիստում դատավոր Վահե Դոլմազյանին ասել են, որ պետք է ազատության մեջ լինեն, որ կարողանան երկրին որեւէ հարցով օգնել այս իրավիճակում: Գեներալները այս իրավիճակում շտապում են դուրս գալ:

Ինչպես հայտնի է, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի, ԳՇ նախկին պետ Արտակ Դավթյանի եւ ՊՆ մյուս պաշտոնյաների դեմ հարուցված քրեական գործը տեղափոխվել է Հակակոռուպցիոն դատարան: Երեկ Հակակոռուպցիոն դատարանում առաջին դատական նիստն էր:

Ինչպես հայտնի է, ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ՔՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ՔՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԲԱՆՅԱԿ

Դեռեւս այս տարվա մայիսին Տիեզերք ուղարկվեց առաջին հայկական արբանյակը: Համենայնդեպս գործադիրը դա հայկական անվանեց ու վստահեցրեց, որ Հայաստանը գիտական ոլորտում լուրջ ձեռքբերում է ունեցել:

Առ այսօր էլ պարզ չէ՝ տիեզերքում ինչ է անում այդ արբանյակը, եթե մինչեւ օրս դրանից ստացված որեւէ լուսանկար կամ տեղեկություն չի հրապարակվել: Եվ անգամ այսօր, երբ աշխարհին ու միաջզգային հանրությանը պետք է ցույց տալ, որ նախահարձակ Ադրբեջանն է եղել ու սադրանք հրահրել Հայաստան-Ադրբեջան սահմանի գրեթե ամբողջ երկայնքով, արբանյակի արած լուսանկար-տեսանյութերից ձայն-ծպտուն չկա:

Իսկ դրա տրամադրած ինֆորմացիան այս պահին ամենապետքականն ու թիրախայինը կարող էր լինել: Հետեւաբար, հարց՝ արբանյակի մասին պատանու խանդավառությամբ արտահայտվող ՔՊ-ականներին՝ ո՞ւր է արբանյակը:

Քաղաքական իշխանությունն արբանյակի մասին, հիշեցնենք, ճառեր էր ասում, ու բանն անգամ նրան էր հասնում, թե այն նույնիսկ մեր սահմաններն է պաշտպանելու. սահմաններ պաշտպանի, հետախուզական տվյալներ հայթայթի եւ այլն, եւ այլն: Իրականությունն ու ճառերը, սակայն, տեսնում ենք՝ ինչքանով են կապվում մեկը մյուսի հետ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀՐԱՀԱՆԳՎԵԼ Է ՏՈՒՆ ՉԳՆԱԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն, սահմանային իրավիճակով պայմանավորված, իրավապահ համակարգի, ուժային կառույցների ղեկավար կազմին հրահանգվել է տուն չգնալ եւ մնալ կառույցներում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահ համակարգին սեպտեմբերի 13-ի գիշերը ժամը 01-ից կանչել են աշխատանքի, եւ, դեռ ավելին, արձակուրդի մեջ գտնվող բոլոր աշխատակիցներին հրահանգել են վերադառնալ աշխատանքի: Իսկ թե ուժային ու իրավապահ համակարգի աշխատակիցները երբ կկարողանան գնալ տուն, դեռ անորոշ է: Մեծ մասը գիշերում է կառույցի շենքում, ժամկետ չի նշվել:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց, թե ինչու են Ադրբեջանի զինված ուժերը հարձակվողական գործողություններ ձեռնարկել: Ազգային ժողովում ունեցած ելույթի ժամանակ Փաշինյանը նախ ընդգծեց, որ բոլոր այն պնդումները, թե Հայաստանի Զինված ուժերը դիմել են ինչ-որ սադրանքների, եւ Ադրբեջանի գործողությունները եղել են ի պատասխան հայկական զինված ուժերի գործողությունների՝ բացարձակապես իրականությանը չեն համապատասխանում:

«Վերջին օրերին հետեւել եք, որ ադրբեջանական կողմը անընդհատ տեղեկատվական պատերազմի ժանրով տեղեկություններ էր տարածում՝ իբր Հայաստանի Զինված ուժերի կողմից ձեռնարկված հարձակումների վերաբերյալ: Պաշտպանության նախարարությունը, բնականաբար, հերքում էր այդ ամենը, որովհետեւ դա իրականության հետ աղերս չուներ»,- ասաց Փաշինյանը: Վարչապետի խոսքով՝ ստեղծված իրավիճակը առաջին հերթին կապված է Ղարաբաղի հարցի բանակցային գործընթացի հետ: Հաջորդ կարեւոր կետը, ըստ վարչապետի, վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգությանը, իրավունքներին եւ դրանից բխող կարգավիճակին:

«Ըստ էության, Ադրբեջանի դիրքորոշումը, որը արտահայտվում է եւ արտահայտվել է բանակցային գործընթացում, հետեւյալն է, որ նրանք չեն ուզում Հայաստանի հետ քննարկել Ղարաբաղի հարցը, որովհետեւ իրենց դիրքորոշումը այն է, որ Ղարաբաղի հարցը լուծված է կամ, առնվազն դա Ադրբեջանի ներքին խնդիրն է, եւ իրենք չեն ուզում այդ հարցը քննարկել Հայաստանի Հանրապետության հետ»,- ասաց վարչապետը:

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

Ինչպես հայտնի է, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ԳՇ նախկին պետ Արտակ Դավթյանի եւ ՊՆ մյուս պաշտոնյաների դեմ հարուցված քրեական գործը տեղափոխվել է Հակակոռուպցիոն դատարան: Երեկ Հակակոռուպցիոն դատարանում առաջին դատական նիստն էր: ArmLur.am-ը դատարանում էր եւ արձանագրեց, թե ինչպես նախկին նախարարին Ազգային անվտանգության ծառայությունից տեղափոխեցին Հակակառուպցիոն դատարան, եւ ինչպես էին նախարարի հարազատները դիմավորում նրան դատարանի մուտքի մոտ:

ՀԱՐՁԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՉՄԱՄՆԱԿՑԵՑ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

Ազգային ժողովը երեկ՝ սեպտեմբերի 13-ին, 65 կողմ ձայնով միաձայն ընդունեց ադրբեջանական հարձակման վերաբերյալ ԱԺ հայտարարության նախագիծը:

Նախագիծն ԱԺ ամբիոնից ներկայացնող իշխանական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը նախքան քվեարկությունն ասաց, որ ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունների հետ չունեցան միասնականություն:

«Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցություններին ներկայացրել էին առանձին առաջարկությունների փաթեթներ: ««Հայաստան» խմբակցության ներկայացրած առաջարկների փաթեթն ուղղակիորեն վերաբերելի չէր երեկ սանձազերծված ագրեսիվ գործողություններին: «Պատիվ ունեմ» խմբակցության ներկայացրած առաջարկների մի մասը վերաբերելի էր որոշ մասով ստեղծված վիճակին, եւ մենք պատրաստ էինք մասնակիորեն հաշվի առնել առաջարկները նշված հայտարարության մեջ: Ընդ որում, ուզում եմ հստակ նշել, որ մեզ համար չափազանց կարեւոր էր ունենալ միասնականություն՝ խորհրդարանական բոլոր խմբակցությունների միջեւ: Ցավոք դա չհաջողվեց», - հայտարարեց Վարդանյանը:

Նախագծում նշվում է, որ «Սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ի սահմաններում, Ադրբեջանի զինված ուժերի ստորաբաժանումները, հրետանային միջոցների, ականանետների ու ԱԹՍ-ների կիրառմամբ ինտենսիվ կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի՝ միանգամից մի քանի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Մասնավորապես՝ հրետակոծման են ենթարկվել Սոթքի, Վարդենիսի, Գորիսի, Կապանի, Արտանիշի եւ Իշխանասարի ուղղությամբ տեղակայված դիրքերը: Հարվածներ են հասցվում ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ենթակառուցվածքներին: Որոշ ուղղություններով ադրբեջանական ստորաբաժանումները ձեռնարկել են դիրքային առաջխաղացման գործողություններ»:

Ստեղծված իրավիճակում պատգամավորները «իրենց լիակատար աջակցությունն են հայտնում ՀՀ Զինված ուժերին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության պահպանման սուրբ գործում՝ կոչ անելով բոլոր քաղաքական ուժերին, բոլոր հայրենակիցներին՝ անկախ քաղաքական դիրքորոշումներից, պահպանել հանգստություն եւ համախմբվել Զինված ուժերի շուրջ:

Միջազգային հանրությանը կոչ են անում խստորեն եւ հասցեական կերպով դատապարտել ՀՀ-ի դեմ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից սանձազերծված ագրեսիան, ՄԱԿ-ի Կանոնադրությամբ ամրագրված՝ տարածքային ամբողջականության դեմ ուժի եւ ուժի կիրառման սպառնալիքի արգելման սկզբունքի կոպտագույն խախտումները:

ՄԱԿ ԱԽ-ից ակնկալում են ստեղծված իրավիճակի անհապաղ քննարկում եւ իրավիճակից բխող գործողությունների իրականացում:

ՀԱՊԿ-ից պահանջում են Հավաքական անվտանգության պայմանագրով ստանձնված պարտավորություններից բխող անհապաղ միջոցառումների իրականացում՝ ուղղված ՀՀ տարածքային ամբողջականության պահպանմանը:

Դիմում են Ռուսաստանի Դաշնությանը՝ շուտափույթ իրագործելու Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ կնքված համապատասխան պայմանագրերով ամրագրված պարտավորությունները՝ ի պաշտպանություն ՀՀ տարածքային ամբողջականության»:

Նախագծի հեղինակներն են իշխող խմբակցության պատգամավորներ Վիլեն Գալստյանը, Անդրանիկ Քոչարյանը, Արմեն Խաչատրյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԵՄ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը ուղեւորվում է Հայաստան եւ Ադրբեջան՝ երկու երկրների ղեկավարների հետ բանակցելու՝ սահմանին իրավիճակի դեէսկալացիայի շուրջ, նշված է ԵՄ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հայտարարությունում:

«Վերջին ժամերին հայ-ադրբեջանական սահմանին լուրջ մարտեր են տեղի ունեցել, ինչի հետեւանքով մարդիկ են զոհվել: Չափազանց կարեւոր է դադարեցնել ռազմական գործողություններն ու վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ: Բոլոր ուժերը պետք է վերադառնան այն դիրքերը, որոնք զբաղեցրել են՝ մինչեւ էսկալացիան, հարկավոր է ամբողջությամբ պահպանել կրակի դադարեցման ռեժիմը», - նշված է Բորելի հայտարարությունում:

«ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը անհապաղ կուղեւորվի երկու երկրներ, որպեսզի աջակցի դեէսկալացիային ու քննարկի Բրյուսելում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ տեղի ունեցած երկխոսության գործընթացի հետագա քայլերը», - նշել է Բորելը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՊԹԱՀԱՐՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ, ՌԴ արտաքին գործերի նախարարի հատուկ ներկայացուցիչ Իգոր Խովաեւին:

Զրուցակիցներն անդրադարձել են Ադրբեջանի կողմից Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ ձեռնարկված ագրեսիային եւ ստեղծված իրավիճակի հաղթահարմանը վերաբերող հարցերի: Կարեւորվել է տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանումը:

Քննարկվել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Վարչապետ Փաշինյանն ընդգծել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ինստիտուտի եւ փորձի օգտագործման կարեւորությունը՝ իր միջազգային մանդատին համապատասխան:

ԱՊԱԷՍԿԱԼԱՑՄԱՆ ԿՈՉ

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերի եւ անվտանգության քաղաքականության գծով օգնականի տեղակալ, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինան արձագանքել է հայ-ադրբեջանական սահմանին Բաքվի սանձազերծած ագրեսիային:

«Շատ անհանգստացած եմ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանի երկայնքով հարձակումներից, այդ թվում՝ Հայաստանի ներսում բնակավայրերին եւ քաղաքացիական ենթակառուցվածքներին հասցված հարվածների դեպքերից: ՆԱՏՕ-ն ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման եւ շտապ ապաէսկալացման կոչ է անում»,- համացանցում գրառում է կատարել Կոլոմինան:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՋՈՒ-Ն ԱԳՐԵՍԻԱՆ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ Է

2022 թվականի սեպտեմբերի 13-ին կեսգիշերից՝ 2020թ. նոյեմբերին 9-ին ստորագրված հրադադարի հաստատման վերաբերյալ եռակողմ հայտարարության, ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից, այլ պետության տարածք ներխուժումից կամ հարձակումից զերծ մնալու վերաբերյալ միջազգային մի շարք պայմանագրերի կոպտագույն խախտումներով՝ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության դեմ ագրեսիա իրականացնելու փաստի առթիվ նույն օրը ՀՀ բեռական օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 149-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում տվյալներ են ձեռք բերվել՝ ադրբեջանական ՋՈՒ-ի կողմից ագրեսիայի, միջազգային սովորույթային մարդասիրական իրավունքի մի շարք նորմերի հանցավոր խախտումների եւ պատերազմական հանցագործությունների կատարման վերաբերյալ:

Մասնավորապես, նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձեռք են բերվել տվյալներ առ այն, որ Ադրբեջանի զինված ուժերի կողմից հրթիռահրետանային միջոցների, ԱԹՍ-ների, ինչպես նաեւ տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակների կիրառությամբ, տարբեր զորամիավորումների ներգրավմամբ կանխամտածված գրոհների թիրախ են դարձել Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում տեղակայված ՀՀ զինված ուժերի՝ Սյունիքի, Վայոց Ձորի եւ Գեղարքունիքի մարզերում մարտական հենակետերը, զորամասերը, զինտեխնիկան, որը հանգեցրել է մարդկային եւ նյութական կորուստների:

Բացի այդ, նպատակաուղղված, առանձին դեպքերում ուղիղ նշանառությամբ, մեկից ավելի անձանց կյանքից զրկելու դիտավորությամբ եւ ազգային ատելության շարժառիթներով հարվածներ են հասցվել թիկունքում գտնվող եւ մարտական գործողություններին չմասնակցող բազմաթիվ բնակավայրերի՝ թիրախավորելով քաղաքացիական բնակչությանը, բնակելի տները, քաղաքացիական ենթակառուցվածքները: Ադրբեջանի ՋՈՒ կողմից իրականացված հրետակոծության հետեւանքով մի քանի քաղաքացիական անձինք ստացել են մարմնական վնասվածքներ:

Ըստ արդեն իսկ ձեռք բերված տվյալների՝ Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության դեմ սանձազերծված ագրեսիայի ակտը Ադրբեջանի ռազմաքաղաքաան ղեկավարության եւ զինված ուժերի կողմից պատրաստվել եւ պլանավորվել է նախապես. այդ նպատակով տեւական ժամանակահատվածում միջոցներ են ձեռնարկվել՝ նախահարձակ ռազմական գործողությունների համար արհեստական հիմքեր ստեղծելու ուղղությամբ:

Քրեական վարույթի շրջանակներում դատախազական հետեւողական հսկողության ներքո իրականացվում են գործողություններ՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից ՀՀ ինքնիշխանության եւ տարածքային անձեռնմխելիության դեմ հերթական հանցավոր ոտնձգությունների, ագրեսիայի նախապես պլանավորման եւ իրականացման, դրանց ընթացքում գործված պատերազմական հանցագործությունների, միջազգային հումանիտար իրավունքների կոպիտ խախտումների մանրամասն փաստագրման, ապացույցների ձեռքբերման ուղղությամբ՝ տեղի ունեցածին լիարժեք քրեաիրավական գնահատականներ տալու, հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելուն հետամուտ լինելու, ինչպես նաեւ միջազգային իրավական համապատասխան մեխանիզմների գործադրման նպատակով:

Ագրեսիայի ակտի հանգամանքների, այդպիսիք հիմնավորող փաստերի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազը իրազեկել է նաեւ գործընկեր պետությունների գլխավոր դատախազներին:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՓՇՏԱԿԵԼ Է ԳՈՒՄԱՐ

Սեպտեմբերի 12-ին՝ ժամը 1:41-ին, ոստիկանության Մալաթիայի բաժին հաղորդում տված 58-ամյա տղամարդը հայտնել է, որ սեպտեմբերի 11-ին ժամը 15:00-ին Իսակովի պողոտայում ոմն Արսեն՝ ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, ապա հափշտակել է 35.000 դրամ, ՀՀ եւ ՌԴ անձնագրերը եւ բջջային հեռախոսը:

Ոստիկանությունից հայտնում են, որ ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է արարքը կատարողի ինքնությունը: 43-ամյա տղամարդը Իսակովի պողոտայի շենքերից մեկի հարակից վագոն-տնակում հայտնաբերվել, ձերբակալվել եւ բերվել է բաժին: Նա ներկայացվել է նախաքննական մարմին: Կատարվում է նախաքննություն:

ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՆՑԱՆՔ Է

Ադրբեջանական զինված ուժերի կողմից շտապօգնության մեքենաների եւ առողջապահական օբյեկտների թիրախավորումը հանցանք է՝ միջազգային մարդասիրական իրավունքի եւ միջազգային կոնվենցիաների կոպիտ խախտում:

Ըստ հաղորդագրության՝ արձանագրված փաստերը ներկայացվել են Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը եւ փոխանցվել միջազգային բոլոր խողովակներով՝ ակնկալելով, որ սանձազերծված ագրեսիան կդատապարտվի եւ կստանա համարժեք գնահատական:

ԻՆՔՆԱՍՊԱՆ Է ԵՂԵԼ

Սեպտեմբերի 13-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 14:40-ի սահմաններում «Վարդենիս» բժշկական կենտրոնից ոստիկանության Վարդենիսի բաժին ահազանգ է ստացվել, որ շտապօգնության բժիշկների խումբը կանչով մեկնել է Վարդենիս քաղաքի շենքերից մեկի բնակարան, որտեղ տան նկուղում հայտնաբերել են տղամարդու կախված դի: Ոստիկաններն ու քննիչները նշված նկուղային հարկում հակի թելից գործված պարանով կոյուղու խողովակից կախված վիճակում հայտնաբերել են նույն տան բնակիչ, 72-ամյա Մ. Մ.-ի դին: Բժիշկները արձանագրել են կենսաբանական մահ: Դեպքի փաստով Վարդենիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Մ. Մ.-ի տղան ծառայում է Ջերմուկի զորամասում, ու քանի որ երեկվանից հայրը որդուց տեղեկություններ չունի, դիմել է ծայրահեղ այդ քայլին՝ կատարելով ինքնասպանություն:

ԼՈՒՐԵՐ

ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Ադրբեջանական ստորաբաժանումները կեսգիշերից սկսած մինչեւ այժմ շարունակում են թիրախավորել սահմանամերձ բնակավայրերն ու քաղաքացիական ենթակառուցվածքները: Այս մասին ասաց ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արամ Թորոսյանը:

«Այս ակնհայտ իրողության ֆոնին առավել քան անհեթեթ են դառնում ադրբեջանական կողմի պնդումները, թե իրենք խաղաղ բնակչությանը չեն թիրախավորում: Կան բավարար ապացույցներ,որոնք հաստատում են Ադրբեջանի ՋՈՒ հանցավոր գործողությունները՝ խաղաղ բնակչության դեմ»,-ասաց խոսնակը:

Իրադրությունը հայ-ադրբեջանական սահմանագծի որոշ հատվածներում երեկվա՝ ժամը 18:00-ի դրությամբ, շարունակում է լարված մնալ: Հակառակորդը հատուկ նշանակության ստորաբաժանումների կիրառմամբ ողջ օրվա ընթացքում փորձում է դիրքային առաջխաղացում ապահովել, մասնավորապես՝ Ներքին Հանդի, Վերին Շորժայի, Արտանիշի եւ Սոթքի ուղղությամբ: ՀՀ ՋՈՒ շարունակում են ողջ ծավալով կատարել իրենց առջեւ դրված մարտական խնդիրները: Հայկական կողմի կորուստների մասին տվյալները ճշտվում են: Երեկվա՝ 18:00-ի դրությամբ, հայկական կողմը պաշտպանության նախարարության կողմից հաստատված 49 զոհ ունի:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

2022 թվականի սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից զինված ուժերի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի դեմ ագրեսիայի ակտ իրականացնելու փաստով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում պարզվել է, որ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերը, կոպտորեն խախտելով 1949 թվականի Ժնեւի կոնվենցիաների Առաջին լրացուցիչ արձանագրության պահանջները, կիրառելով ականանետային-հրթիռահրետանային միջոցներ, անօդաչու թռչող սարքեր, կանխամտածված եւ նպատակաուղղված հարձակման թիրախ են դարձրել խոր թիկունքում գտնվող քաղաքացիական օբյեկտները եւ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող քաղաքացիական բնակչությանը:

Մասնավորապես՝ հարձակման օբյեկտ են դարձվել (հրետակոծվել են) Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերի բնակավայրերը, Կապան-Ճակատեն ավտոճանապարհի վրա թիրախավորվել եւ խոցվել է շտապօգնության տարբերանշանը կրող ավտոմեքենան:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 9-ից 12-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 117 դեպք, որից 11-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԸՆՏՐԱԳՐԱՎ

Սեպտեմբերի 25-ին Բերդ խոշորացված համայնքի ավագանու համամասնական ընտրություններին մասնակցող «Արդարություն» կուսակցության եւ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ստեղծած դաշինքը՝ «Արժանապատիվ սերունդը» ԿԸՀ ներկայացրած հայտարարագրում դրամական միջոցներ,եկամուտներ, անշարժ եւ շարժական գույք չի ներկայացրել: Այդ հայտարարագիրը վավերացված է «Արդարություն» կուսակցության կնիքով: Եկամուտներ, դրամական միջոցներ եւ գույք չունեցող այդ դաշինքը պետական բյուջե է մուծել ընտրագրավի գումարը՝ 500 հազար դրամ: Այդ գումարը կվերադարձվի դաշինքին, եթե դաշինքը սեպտեմբերի 25-ին ստանա ընտրություններին մասնակցածների քվեների 7 տոկոսը: Բերդ քաղաքից հայտնեցին, որ ընտրությունների հավանական մասնակիցների թիվը շուրջ 12 հազար է, այսինքն՝ նշված դաշինքը ընտրագրավը ետ ստանալու համար պետք է ստանա առնվազն 840 քվե, ինչը կասկածելի է:

55 ՄԱՐԴ ՉԵՆ ՀԱՎԱՔԵԼ

Իշխանամետ կայքերից մեկը հղում անելով ԱԱԾ-ից աղբյուրին՝ գրել է, թե սեպտեմբերի 25-ին Բերդ խոշորացված համայնքի ավագանու ընտրություններում ՔՊ կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին համար Վահրամ Սուքիասյանի վարկանիշը 55 տոկոս է: Դա հարուցել էր Բերդ համայնքի շատ բնակիչների զարմանքը, քանզի Բերդ համայնքի գյուղերում շատերը Վահրամ Սուքիասյանին չեն ճանաչում: «Ջորավոր համայնք» դաշինքի նախընտրական շտաբի պետ, այդ դաշինքի թեկնածուների ցանկի 4-րդ համար Արամ Նիգոյանը, ով 1989 թվականից ԱԻՄ անդամ է, 1999-ից Նավուր գյուղի ղեկավարը սեպտեմբերի 12-ին Բերդ համայնքի գյուղերից մեկում քարոզարշավի ժամանակ անդրադարձել է այդ տեղեկատվությանը՝ հայտարարելով, որ երբ ՔՊ-ականները երթով անցնում են Բերդ քաղաքի կենտրոնական՝ Մաշտոցի փողոցով, նույնիսկ 55 մարդ չեն կարողանում հավաքել:

ԲԵՐԴՈՒՄ ԱՊԱԳԱ ՉԿԱ

Սեպտեմբերի 7-ին Բերդ խոշորացված համայնքի սահմանամերձ Այգեձոր գյուղում սեպտեմբերի 25-ին կայանալիք Բերդ համայնքի ավագանու ընտրությունների կապակցությամբ քարոզարշավ անող ՔՊ կուսակցության անդամների հետ վիճաբանություն է եղել: Այգեձորից հայտնեցին, որ Այգեձորի նախկին գյուղապետ Սասուն Սաֆարյանին զայրացրել է «Բերդում ապագա կա» ՔՊ-ական կարգախոսը: Նա վրդովվել է, ասելով, թե ի՞նչ ապագա կարող է լինել ներկա իշխանության օրոք, դժգոհել նաեւ տարիներ առաջ կառուցված Բերդ-Այգեձոր-Չինարի ավտոճանապարհի Այգեձորի հատվածի որակից, որտեղ ասֆալտը փռել են մեկ շերտով: Այգեձորի հատվածում ճանապարհը հիմնանորոգել է Վանաձորից ճանապարհաշինական ինչ-որ կազմակերպություն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՐՑ

«Հայաստանն ունի բոլոր ֆինանսական միջոցները՝ ձեռք բերելու անհրաժեշտ պատշաճական զենք-զինամթերքը. կան երկներ, որոնք պատրաստ են զենք վաճառել ՀՀ-ին, սակայն ոչ բոլոր երկրներն են պատրաստ, բացի այդ, կա նաեւ տրանսպորտային հարց»: -Այս մասին ասաց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԱԺ նիստում:

ՔՊ խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանը հետաքրքրվեց՝ կարո՞ղ է որեւէ երկիր արգելել, որ Հայաստանը ինքնապաշտպանական զենքեր ձեռք բերի՝ պաշտպանելու երկիրը ադրբեջանական ագրեսիայից:

«Զենք-զինամթերք ձեռք բերելու վերաբերյալ հարցը մենք դիտարկում ենք որպես մեկ ամբողջություն, ինչը տրամաբանական է: Բայց այդ հարցն իրականում բաղկացած է 4 բաղադրիչից: Առաջինը՝ ֆինանսական բաղադրիչն է, երկրորդը՝ քաղաքական, երրորդ բաղադրիչը՝ տեխնիկական, չորրորդը՝ տրանսպորտային: Եվ, երբ մենք խոսում ենք զենք-զինամթերքի ձեռքբերման մասին, պետք է արձանագրենք, որ այն բաղկացած է այս 4 բաղադրիչներից: Հայաստանի Հանրապետությունն այսօր ունի բոլոր ֆինանսական հնարավորությունները՝ ձեռք բերելու իրեն անհրաժեշտ պաշտպանական զենք-զինամթերք: Երկրորդ բաղադրիչը քաղաքականն է. բնականաբար ոչ բոլոր երկրներն են, որ պատրաստ են զենք վաճառել ՀՀ-ին, բայց կան երկրներ, որոնք պատրաստ են զենք վաճառել ՀՀ-ին: Բայց կան երկրներ, որոնք պատրաստ չեն այն փաստին, որ Հայաստանը այն երկրից, որը պատրաստ է իրեն զենք վաճառել, զենք գնի»,-ասաց Փաշինյանը:

Ըստ նրա՝ այդ պատրաստ լինել եւ չլինելը բերում է հետեւանքների, այդ թվում՝ անվտանգային: Վարչապետը նշեց՝ սովորաբար զենք գնում են անվտանգային սպառնալիքը կառավարելու համար, բայց լինում են իրավիճակներ, երբ զենքը գնելը կապված է անվտանգային նոր սպառնալիքներ ստեղծելու հետ:

Խոսելով տեխնիկական խնդրից՝ նա ասաց, որ կան որոշ երկրներ, որոնք ուզում են, պատրաստ են ՀՀ-ին զենք վաճառել եւ չկա որեւէ խնդիր, բայց չունեն անհրաժեշտ զենքը ամենատարբեր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով: «Օրինակ՝ այն տրամաբանությամբ, որ նրանց արտադրական ծավալներն ու պատվերներն առաջիկա տարիներին, երբեմն շատ երկար տարիների կտրվածքով, այնպես են դասավորված, որ նրանք նաեւ ներքին կարիքների, նաեւ շուկայում իրենց դիրքը չկորցնելու համար պետք է պայմանագրային որոշ պարտավորություններ կատարեն»,-ասաց Փաշինյանը:

Խոսելով տրանսպորտային բաղադրիչից՝ նա ընդգծեց՝ ցավոք, Հայաստանը ելք չունի դեպի ծով: Ըստ նրա՝ շատ դեպքերում տրանսպորտային բաղադրիչն իր բարդությամբ չի տարբերվում նախորդ բաղադրիչներից, երբեմն ավելի սրվում է՝ այդ թվում օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով:

Վարչապետը հավելեց՝ չի ասում, թե ֆինանսական ռեսուրսներն անսահմանափակ են, սակայն, պաշտպանունակությունը էականորեն բարձրացնելու, այդ առումով բավարարված զգալու խնդիրը լուծելու համար կան անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Իսկ արդյոք կառավարությունն աշխատո՞ւմ է՝ հնարավոր խնդիրները հաղթահարելու համար, նա վստահեցրեց, որ աշխատում են ամենօրյա ռեժիմով:

ՈՒՂԵՐՁ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՎ ՉԷ

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հանդես է եկել ուղերձով:

Ուղերձում ասվում է. «Սիրելի՛ ժողովուրդ հայոց

Վերստին խռովված են մեր հոգիները: Ցավով եւ անհանգստությամբ ենք հետեւում Հայաստանի սահմանի երկայնքով Ադրբեջանի կողմից գիշերը սանձազերծված սադրիչ մարտական գործողություններին, որոնց հետեւանքով գնդակոծվել են խաղաղ բնակավայրեր, կան զոհեր եւ վիրավորներ: Դատապարտելի են խաղաղության օրակարգով բանակցային գործընթացների ժամանակահատվածում ձեռնարկված այս դավադիր քայլերը: Ակնհայտ է՝ թշնամին չի փոխվել, չեն փոխվել նաեւ նրա նկրտումներն ու մտադրությունները: 2020 թվականի պատերազմը, վայրագ գործողությունները Արցախի մեր ժողովրդի եւ ոտնձգությունները Հայաստանի սահմանների նկատմամբ, որ համարժեք միջազգային գնահատականի այդպես էլ չարժանացան, համարձակություն ներշնչեցին թշնամուն շարունակական ռազմական գործողություններով փորձելու հասնել ցանկալի զիջումների:

Իրական, արժանապատիվ խաղաղությունը չի կարող հաստատվել սպառնալիքներով ու պարտադրանքներով, չի կարող բարեբեր լինել եւ հարատեւություն ունենալ:

Սիրելի զավակներ մեր ի Հայաստան, Արցախ եւ ի սփյուռս, վստահ ենք, մեր ժողովրդի ոգին ամուր է, հայրենիքի սահմանները պահող զինվորները՝ անվեհեր: Թիկունքում հայրենի սրբազան հողն է, մեր ընտանիքները, հայրենի դրոշը ծածանող մեր նահատակ հերոսների շիրիմները եւ առ Աստված ձայնող տաճարները:

Առկա իրադրության մեջ չպետք է թույլ տանք, որ անմիաբանությունն ու ներհասարակական բեւեռացումները մեզ առաջնորդեն նոր պարտությունների, պարտադրված խաղաղությունը՝ նոր զիջումների:

Մեր միասնականությամբ եւ հայրենիքի հանդեպ հավատարմությամբ պետք է դիմակայենք նաեւ այս փորձությանը: Արդ, մեր կարողություններն ու հնարավորությունները, ազգային ողջ ներուժը համախմբենք եւ սատար լինենք Հայոց Բանակին եւ հայրենիքի կարիքներին: Չերկմտենք եւ գործենք առ հայրենին սիրով եւ պատասխանատվությամբ:

Ամենայն հանձնառությամբ յուրաքանչյուրս մեր պատասխանատվության ոլորտում անենք կարելին՝ հանուն անկախ պետականության անսասանության, հանուն մեր ազգի հարատեւության:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից կոչ ենք ուղղում միջազգային հանրությանը եւ հատկապես մեր բարեկամ երկրներին՝ ազդու քայլեր ձեռնարկել կասեցնելու Ադրբեջանի հերթական ագրեսիան եւ նկրտումները Հայոց աշխարհի նկատմամբ:

Եղբայրական մեր դիմումն է Քույր Եկեղեցիների հովվապետերին աղոթելու առաջին քրիստոնյա պետության, նրա հավատավոր ժողովրդի ապահովության համար եւ կարելի նպաստ բերելու տարածաշրջանում իրական խաղաղության հաստատմանը:

Մեր հայցն է առ Միածին Որդին՝ մեր Տերը Հիսուս Քրիստոս՝ վերստին այցի գալու իր փոքր հոտին, որին դարեր առաջ ընտրեց ի վկայություն իր հավատի: Աղոթում ենք զոհված մեր զավակների հոգիների խաղաղության, նրանց հարազատների ու ընտանիքների մխիթարության համար: Շուտափույթ ապաքինում ենք մաղթում բոլոր վիրավորներին: Թող Տերը ամուր ու տոկուն պահի եւ Իր Ամենախնամ Սուրբ Աջով պահպանի հայոց զինվորին:

Աստված պահապան Հայոց բանակին եւ մեր հայրենիքին:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 39 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 55-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՆՏԱՌՆԵՐՆ ԱՅՐՎՈՒՄ ԵՆ

Ջերմուկի անտառներն այրվում են: ArmLur.am-ի այս տեղեկությունը հաստատեց արտակարգ իրավիճակների նախարարի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը: Մեզ հետ զրույցում նա նշեց, որ հրդեհի չորս օջախ կա:

«Այն տարածքներում, որոնք վերահսկվում են հակառակորդի կողմից, հրդեհաշիջման աշխատանքներ չեն իրականացվում: Մյուս հատվածներում իրականացվում են, թե ինչ ծավալների մասին է խոսքը, այս պահին չենք կարող ասել», -նշեց նա:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Կառավարությունը մտադիր է զինվորականների աշխատավարձը 240 տոկոսով բարձրացնել: Այս մասին Ազգային ժողովի նիստում ասաց Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով պատգամավոր Հովիկ Աղազարյանի՝ բարեփոխումների մասին հարցին:

«Զինված ուժերի բարեփոխումների ոլորտում մենք շատ լուրջ քայլեր ենք ձեռնարկում: Պատրաստվել է ծրագիր, մենք մեր զինվորականների աշխատավարձերն անգամներով պետք է բարձրացնենք, ոչ թե 25 կամ 30 տոկոսով, այլ՝3 անգամ: 240 տոկոսի մասին է խոսքը: Բայց այդ 240 տոկոսը շեմն է, բազան, որի վրա պետք է այլ գործակիցներ աշխատեն»,-ասաց Փաշինյանը:

Նա նաեւ հիշեցրեց, որ նախորդ տարիներին կրկնապատկել է նաեւ ռազմաարդյունաբերության ֆինանսավորումը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը վերանայել է տնտեսական աճի իր կանխատեսումը, այսպիսով՝ 4.9 տոկոսի փոխարեն կանխատեսվում է 12.9 տոկոս տնտեսական աճ: Այս մասին ասուլիսում ասաց Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը: «Մենք էապես փոխել ենք կանխատեսումը: Նախկին կանխատեսած 4.9 տոկոսի համեմատ 12.9 տոկոս է աճը կազմում»,-ասաց Գալստյանը:

Կենտրոնական բանկի նախագահը դա պայմանավորեց հիմնականում պահանջարկով: Ծառայությունների, շինարարության ոլորտներում հսկայական տարբերություններ կան, որոշակի տարբերություններ կան նաեւ արդյունաբերության ոլորտում: «Նաեւ սա է պատճառը, որ այսօր տեսնում ենք, որ ունենք իրավիճակ, երբ աճում են ոչ միայն ոչ պարենային ապրանքների գները, այլ նաեւ ծառայությունների գները»,-նշեց նա:

ՕԴԱՅԻՆ ԱՐԳԵԼՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ ՉԵՆ ԹՌՉԻ

Հայաստանի դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական ագրեսիայի ֆոնին թշնամի երկրի ազգային ավիափոխադրող «AZAL»-ի օդանավերը, որոնք մինչ այս Հայաստանի երկնքով էին իրականացնում Բաքու-Նախիջեւան-Բաքու ավիահաղորդակցությունը, երեկվանից սկսել են բոլոր թռիչքները կատարել Իրանի տարածքով:

Մինչեւ սեպտեմբերի 12-ը ներառյալ Հայաստանի օդային տարածքով են իրականացվել «AZAL»-ի Բաքու-Նախիջեւան-Բաքու 3 չվերթներ՝ առավոտյան, կեսօրին, երեկոյան:

Հիշեցնենք, որ այդ թռիչքները վերսկսվել էին 2021-ի հոկտեմբերից, իսկ մինչ այդ թշնամու քաղաքացիական օդանավերը չէին մտնում ՀՀ երկինք, ինչն իր պատճառներն ուներ: 2014-ի նոյեմբերից ադրբեջանցիները խուսափում էին թռչել Հայաստանի երկնքով, որովհետեւ այդ տարվա նոյեմբերի 12-ին ակնհայտ ագրեսիա իրականացնելով՝ խոցել էին շփման գոտուց այս կողմ՝ Արցախի երկնքում ուսումնամարզական թռիչք կատարող «Մի-24» ռազմական ուղղաթիռը, որը զինված չէր: Դրանից հետո ադրբեջանցիները վախենում էին հայկական կողմի պատասխան գործողություններից եւ 7 տարի շարունակ Բաքվից Նախիջեւան էին թռչում միայն Իրանի տարածքով:

Այն բանից հետո, երբ Հայաստանի իշխանությունների համաձայնությամբ AZAL-ը վերսկսեց թռիչքները ՀՀ երկնքով, Ադրբեջանի ազգային ավիափոխադրողը հայտարարել էր, թե այդ երթուղու շնորհիվ կկրճատվի թռիչքի ժամանակն ու վառելիքի ծախսը: Այսինքն՝ Հայաստանի երկնքով թռիչքները ձեռնտու տարբերակ էին ադրբեջանցիներին:

Նկատենք, որ Բաքու-Նախիջեւան-Բաքու չվերթ կատարելիս ադրբեջանական օդանավերը ՀՀ տարածքում անցնում են Վարդենիսի, Մարտունու, Վայոց Ձորի, երբեմն էլ՝ Արարատի մարզի երկնքով: Մինչ այս պահը շարունակվող ռազմական գործողությունների ամենաթեժ ուղղություններից մեկը հենց Վարդենիսի տարածաշրջանն է:

Մինչեւ այսօր Հայաստանի երկնքով էր իրականացվում նաեւ Թուրքիայի ազգային ավիափոխադրող «Turkish Airlines»-ի Ստամբուլ-Նախիջեւան-Գյանջա-Ստամբուլ չվերթի՝ Նախիջեւան-Գյանջա-Ստամբուլ հատվածը: Սակայն այսօր արդեն թուրքական օդանավը Նախիջեւանից Գյանջա մեկնելու համար մտել է Իրանի օդային տարածք, իսկ Գյանջայից Ստամբուլ մեկնելիս՝ Վրաստանի երկինք:

ԼՈՒՐԵՐ

ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՆՈՐ ՀԱՐՁԱԿՈՒՄ

Եվրախորհրդարանում Եվրոպայի ժողովրդական կուսակցության խմբակցության անդամ Ֆրանսուա-Քսավիե Բելամին սեպտեմբերի 13-ին ԵԽ-ում ելույթ է ունեցել՝ խստորեն դատապարտելով Հայաստանի դեմ Ադրբեջանի սանձազերծած նոր հարձակումը:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ, պատգամավորը արձանագրել է, որ Հայաստանի դեմ ռազմական լայնածավալ հարձակման ընթացքում Ադրբեջանը ակտիվ հրետակոծել է Հայաստանի տարբեր քաղաքներ ու գյուղեր, ընդ որում՝ ոչ միայն ռազմական, այլեւ քաղաքացիական օբյեկտներ, որը հայկական կողմում հանգեցրել է մի քանի տասնյակ զոհերի:

«Ոչինչ, ոչինչ չի կարող արդարացնել այս ագրեսիան: Երկու տարի առաջ, կրկին խախտելով միջազգային իրավունքի բոլոր օրենքները, Ադրբեջանը՝ Թուրքիայի աջակցությամբ, հարձակվել է Լեռնային Ղարաբաղի վրա: Այս անգամ Ադրբեջանը հարձակվում է արդեն ՀՀ ինքնիշխան տարածքի վրա»,- նշել է նա:

Բելամին հիշեցրել է, որ երբ Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց՝ ընդդեմ Ուկրաինայի, ԵԽ-ն առանց վարանելու շատ պարզ ձեւով դատապարտեց դա՝ արձանագրելով՝ «պետք է նույնը անենք երեկ երեկոյան պարոն Ալիեւի ռեժիմի կողմից կազմակերպված հարձակման վերաբերյալ»:

«Տիկին նախագահող, խնդրում ենք հարգել մեր պառլամենտի ձայնն այս արտակարգ իրավիճակում: Մեր վճռական դիրքորոշումը կարող է կանխել այս պատերազմը եւ կանգնեցնել Ադրբեջանին իր ծրագրերը կյանքի կոչելու հարցում: Եկեք դադարեցնենք գործակցությունն այս հանցավոր վարչակազմի հետ եւ ձեռնարկենք համապատասխան միջոցներ, սահմանենք արդյունավետ պատժամիջոցներ: Եկեք անմիջապես հրավիրենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստ...

Մենք պարտավոր ենք նախեւառաջ այդ քայլերը ձեռնարկել՝ կանգնելով հայ ժողովրդի կողքին, ում վշտակցություն ենք հայտնում իրենց զրկանքների ու կորուստների համար»,- ասվում է նրա ելույթի եզրափակիչ հատվածում:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը հայտնեց, թե ինչու իրենց խմբակցությունը չի միացել ԱԺ հայտարարությանը՝ ադրբեջանական հարձակման վերաբերյալ: Մինասյանն իր ելույթում նախ շեշտեց, որ նախորդ ամբողջ գիշեր իրենց խմբակցությունն աշխատել եւ հայտարարություն է արել: Ըստ «Հայաստան» խմբակցության՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի, փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի եւ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանի մշակած հայտարարության նախագիծն ամբողջական չէր:

Խմբակցությունն առաջարկել էր 4 կետ՝ որպես կարեւորագույն ուղերձ՝ ինչպես միջազգային հանրությանը, այնպես էլ ՀՀ քաղաքացիներին, սակայն դրանք չէին ներառվել նախագծում: «Մենք այս հայտարարությանը դեմ չենք, ասում ենք, որ այն ամբողջական չէ: Եվ, հետեւաբար, ոչ մի լուծում չի պարունակում իր մեջ: Եթե ուզում ենք, որ լուծում պարունակի, ապա պետք է հստակ, թիրախավորված ասենք»,-կարծիք հայտնեց Մինասյանը:

Այսպիսով՝նա ասաց, որ չեն մասնակցելու հարցի քվեարկությանը, քանի որ նախագիծը համարում են կիսատ: Արձագանքելով իշխանական պատգամավորներին՝ Մինասյանը շեշտեց՝ եթե իրենք շահագրգռված չլինեին պետականության պաշտպանության հարցով, այդ կարեւորագույն կետերը չէին ասի: Նիստին ընդդիմությունից մասնակցում էին «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանն ու քարտուղար Արծվիկ Մինասյանը:

Ադրբեջանական հարձակման վերաբերյալ ԱԺ հայտարարության նախագիծը խորհրդարանն ընդունեց 65 կողմ ձայնով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

ԹԱՏՐՈՆԻ 50-ԱՄՅԱԿՆ ՈՒ ՀՅՈՒՐԵՐԸ

Սեպտեմբերի 11-ին Կամերային թատրոնում տեղի ունեցավ թատրոնի կազմավորման 50, եւ պետական կազավիճակ ստանալու 40 ամյակների տոնական միջոցառումը: Կամերային թատրոնի համար հոբելյանական տարին հագեցած է եղել պրեմիերաներով, հետաքրքիր հանդիպումներով ու տպավորիչ իրադարձություններով:

ArmLur.am-ը շքեղ երեկոյի անակնկալների եւ հյուրերի մասին զրուցել է Կամերային թատրոնի դերասանուհի Անի Լուպեի հետ:

Դերասանուհու խոսքով՝ այս տարի եւ առավելապես սեպտեմբերի 11-ը առանձնահատուկ էր կամերայինցիների համար:

«Շատ գեղեցիկ եւ շքեղ էր կազմակերպված, եւ այս տարի առանձնացավ նրանով, որ մեր օրը բոլորինը դարձրեցինք, ավելի մեծ մասշտաբով նշեցինք: Կամերային թատրոնի հարակից տարածքում էլ բացվեց «Աստղային ճեմուղի»: Առաջին աստղերը նվիրվեցին թատրոնի երախտավորներ Եվգենյա Պոդպոմոգովային եւ Գեորգի Ամիրագյանին»,-նշեց դերասանուհին:

Անի Լուպեի խոսքով՝ Երեկոյին թատրոնի ցուցասրահում ներկայացվեց յուրօրինակ էքսպոզիցիա, որը պատմական էքսկուրս է՝ նվիրված թատրոնի կազմավորմանն ու գործունեությանը. «Բացի դա, հյուրերին բացառիկ հնարավորություն էր ընձեռվել դիտել «Մի թատրոնի պատմություն» փաստավավերագրական ֆիլմը, մասնակցել Արա Երնջակյանի հեղինակած «Ծննդյան վկայական» գրքի շնորհանդեսին: Թե՛ կինոնկարը, թե՛ գիրքը պատմում են Կամերային թատրոնի ստեղծման ու կայացման, ներկայացումների ու նախագծերի, արտիստների եւ ընկերների մասին»:

Իսկ ահա թատրոնի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար Արա Երնջակյանը, հիշելով թատրոնի ստեղծման սկզբնական փուլը, խոստովանեց, որ թատրոն չի սիրել. հայրը կարծել է՝ տղամարդը չպետք է զբաղվի թատրոնով: Երնջակյանների ընտանիքում մաթեմատիկայի պաշտամունք է եղել, իսկ Արա Երնջակյանը սովորել է Պոլիտեխնիկական ինստիտուտի կիբերնետիկայի ֆակուլտետում, սակայն «Ուրախների եւ հնարամիտների ակումբ»-ը ուսանող Երնջակյանին շեղել է՝ տանելով այլ ուղղությամբ:

Երեւանի Կամերային թատրոնը պաշտոնապես բացվել է 1981 թվականի դեկտեմբերի 15-ին: Կամերային թատրոնի ստեղծման առաջին իսկ տարիներից Արա Երնջակյանի եւ ստեղծագործական կոլեկտիվի նպատակն էր դուրս գալ զուտ թատերական գործունեության շրջանակներից, ձեւավորել մշակութային համալիր: Բավական է նշել կինոսրահը, Fe-Պատկերասրահը (1994), «Միսս Հայաստան» գեղեցկության եւ նրբագեղության մրցույթը (1996-2000), «ԵրԿաթ TV», «ՅԱՆ TV» հեռուստաընկերությունները, «ԵՐԿԱԹ» մշակութային ակումբը եւ շատ այլ ստեղծագործական նախագծեր: Կամերային թատրոնի ուժերով նկարահանվել են մի քանի լիամետրաժ գեղարվեստական ֆիլմեր:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

ՎԵՆԵՏԻԿԻ 79-ՐԴ ԿԻՆՈՖԱՌԱՏՈՆԸ

Ավարտվել է Վենեսիկի 79-րդ կինոփառատոնը, ու բոլոր հաղթողները ստացել են իրենց մրցանակները: Միջազգային ժյուրին, որն այս տարի գլխավորում էր օսկարակիր Ջուլիանա Մուրը, ամփոփել է արդյունքները: Ժյուրիի կազմում էին նաեւ ճապոնական ծագմամբ բրիտանացի գրող Կաձուո Իսիգուրոն, ռեժիսորներ Մարիանո Կոնը, Լեոնարդո դի Կոստանզոն, Ռոդրիգո Սորոգոյենը եւ փառատոնի նախորդ տարվա հաղթող Օդրի Դիվանը, իրանցի դերասանուհի Լեյլա Հաթամին:



«Ոսկե առյուծ» գլխավոր մրցանակը ստացել է Լորա Փոյթրասի «Ողջ գեղեցկությունն ու արյունահեղությունը» (All the Beauty and the Bloodshed) աշխատանքը:

Հիմնական մրցույթին մասնակցած 23 ֆիլմերից միայն այդ մեկն է վավերագրական եղել: Ֆիլմը պատմում է Նյու Յորքից լուսանկարիչ Նան Գոլդինի մասին, որը փորձում է Purdue Pharma ընկերությանը պատասխանատվության ենթարկել օփիոիդներ արտադրելու համար:

Իտալացի ռեժիսոր Լուկա Գուադանինոյի «Ոսկորները եւ ամբողջը» (Bones & All) ֆիլմն էլ «Արծաթե առյուծի» է արժանացել: Գլխավորում դերերում են Տիմոտի Շալամեն եւ Թեյլոր Ռասելը: Վերջինս լավագույն նորամուտի համար ստացել է Մարչելո Մաստրոյանիի անվան մրցանակը:

Գրան պրիի հաղթողը ֆրանսիացի Էլիս Դիոպի «Սուրբ Օմեր» (Saint Omer) ֆիլմն է: Այն մի կնոջ դատական գործի մասին է, որը մակընթացության ժամանակ իր 1,5 տարեկան դստերը թողել է ծովափին, ինչի արդյունքում փոքրիկը մահացել է:

Վոլպիի գավաթը լավագույն դերասանուհու ու դերասանի կոչման համար ստացել են Քեյթ Բլանշետը եւ Քոլին Ֆարելը: Բլանշետը «Թար» (Tnr) ֆիլմում մարմնավորել է առաջին կնոջը՝ Լիդիա Թարին, որը գլխավորել է Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախումբը, Ֆարելն էլ տիտղոսին արժանացել է «Ինիշերինի բանշիները» (The Banshees of Inisherin) ֆիլմում դերի համար, որը պատմում է Իռլանդիայի հեռավոր կղզիներից մեկում գժտված 2 ընկերների մասին: Ֆիլմի ռեժիսոր Մարտին Մաքդոնահը ստացել է նաեւ լավագույն սցենարի մրցանակը:

Ժյուրիի հատուկ մրցանակն իրանցի ռեժիսոր Ջաֆար Փանահի «Առանց արջերի» (No Bears) ֆիլմինն է, որի գլխավոր հերոսը բանտարկված է «հակակառավարական քարոզչության» համար:

Մրցանակներից բացի, փառատոնն աչքի է ընկել մի շարք ֆիլմերի պրեմիերաներով ու բազմաթիվ գեղեցիկ հագուստներով, որոնցից առանձնացրել ենք ամենայուրահատուկները:

ԼՈՒՐԵՐ

ԲԱՑ ԿԹՈՂՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Իտալիայի չեմպիոն, «Միլանի» նորեկ 27-ամյա բելգիացի հարձակվող Դիվոկ Օրիգին բաց կթողնի առաջիկա հանդիպումները մկանային վնասվածքի պատճառով:

Դիվոկ Օրիգին բաց էր թողել նաեւ նախորդ հանդիպումը «Սամպդորիայի» հետ Իտալիայի առաջնության 6-րդ տուրում: «Միլանը» հաղթել էր 2:1 հաշվով:

Դիվոկ Օրիգին կմեկնի Բելգիա եւ բուժզննում կանցնի նաեւ ազգային հավաքականում: Նա չի օգնի «Միլանին» Զագրեբի «Դինամոյի» եւ «Նապոլիի» հետ առաջիկա խաղերում:

Դիվոկ Օրիգին ամռանը Անգլիայի փոխչեմպիոն «Լիվերպուլից» ազատ գործակալի կարգավիճակում էր հեռացել եւ 4 տարվա պայմանագիր կնքել «Միլանի» հետ:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Իսպանիայի փոխչեմպիոն «Բարսելոնան» համաձայնության է հասել թիմի կիսապաշտպան Գավիի հետ՝ պայմանագրի երկարաձգման վերաբերյալ: 18-ամյա իսպանացի ֆուտբոլիստի նոր պայմանագիրը նախատեսված կլինի մինչեւ 2026թ. հունիս:

Գավիի հրաժարագինը կսահմանվի 1 միլիարդ եվրո: Նրա աշխատավարձը զգալիորեն կբարձրանա: Ընթացիկ մրցաշրջանում Գավին «Բարսելոնայի» հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 6 հանդիպման:

ԺԱՆ-ԼՅՈՒԿ ԳՈԴԱՐԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Ֆրանսիացի ռեժիսոր Ժան-Լյուկ Գոդարի հարազատները պատմել են, որ նա մահացել է էվթանազիայի միջոցով:

«Նա առողջական խնդիրներ չուներ, պարզապես հոգնած էր, ուստի որոշեց վերջ տալ հոգնածությանը: Դա իր որոշումն էր, եւ իր համար կարեւոր էր այդ մասին իմանալ»,- պատմել է Գոդարի ծանոթներից մեկը:

Հարազատները պնդում են, որ Գոդարը հաճախ է մտածել ինքնասպանության մասին: Երիտասարդ տարիներին ռեժիսորը նույնիսկ ինքնասպանության փորձ է արել, իսկ ավելի ուշ ասել է, որ ուզում է նման քայլի գնալ՝ ուշադրության արժանանալու համար:

Բացի այդ, այս թեման արտացոլվել է նրա ստեղծագործություններում: 2004 թվականին նկարահանված «Մեր երաժշտությունը» ֆիլմում Ալբեր Քամյուի «Սիզիփոսի առասպել»-ից կա հետեւյալ արտահայտությունը՝ «Կա միայն մեկ իսկապես լուրջ փիլիսոփայական խնդիր՝ ինքնասպանությունը»:

91-ամյա Գոդարի մահվան մասին հայտնի է դարձել այսօր ավելի վաղ: Նրա աշխատանքները կազմում են 130 ֆիլմ, այդ թվում՝ «Արհամարհանք» (1963), «Օտարների բանդա» (1964), «Խելագար Պիերոտ» (1965) եւ բազմաթիվ այլ ժապավեններ:

● *Սեպտեմբերի 13-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա թատերական ներկայանցում՝ «Մորաքույրը Փարիզից»: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժ. 19:00:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պետք է անի անձը կենսաթոշակի անցնելու համար:

Բաբկեն Յավրյան (62 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին՝ պետք է նախապատրաստի կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը եւ դիմի իր բնակության (հաշվառման) վայրի կեսաթոշակ նշանակող մարմին: Այսպես. տարիքային կենսաթոշակ նշանակելու համար նա պետք է ներկայացնի՝

1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարանիշը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկը, անհրաժեշտության դեպքում՝ ստաժը հաստատող այլ փաստաթղթեր կամ արխիվային տեղեկանքներ),
5) սոցիալական վճար կատարած լինելու մասին ծառայության տված տեղեկանքը (կամ այդ փաստը հավաստող վճարման հանձնարարագրեր, անդորրագրեր) կամ գործատուի (Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու եկեղեցականի դեպքում՝ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի) տված տեղեկանքն աշխատավարձի չափի մասին՝ ըստ տարիների եւ ամիսների,
6) լուսանկար (4 x 6 սմ չափի):

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումում նա լրացնում է աշխատակցի տրամադրած դիմումի ձեւը, որից հետո նրան է վերադարձվում դիմումի ծանուցումը, որտեղ նշվում է դիմումի գրանցման համարը, ընդունման ամսաթիվը, ընդունող աշխատակցի ազգանունը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ժամկետը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի էական խախտումը

Գեւորգ Աբրահամյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին առաջադրվող պահանջների էական խախտումներ (չվերացվող, ինչպես նաեւ այնպիսի խախտումներ, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո եւ նման բնույթի այլ խախտումներ), որոնց դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ հրաժարվել պայմանագիրը կատարելուց եւ պահանջել՝ վերադարձնելու ապրանքի (աշխատանքի, ծառայության) համար վճարված գումարը կամ պահանջել ոչ պատշաճ որակի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) փոխարինելու պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով (աշխատանքով, ծառայությամբ).

Շուկայի վերահսկողական տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապրանքի որակը համարվում է արտադրանքի բնութագրերի ամբողջություն, որը վերաբերում է դրա հատկությանը՝ բավարարելու իր նշանակությանը համապատասխանող սահմանված կամ ենթադրվող պահանջները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Եղվարդ-Աբովյան ավտոճանապարհին:

Նոր Գեղի գյուղի վարչական տարածքում ВАЗ 2103 մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել երկաթե արգելապատնեշներին, շրջվել եւ մասամբ հայտնվել ճանապարհի երթեւեկելի գոտում:

Վթարից հետեւանքով 3 անձի տեղափոխել են հիվանդանոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.09.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: